կոմիդիայի, Բիւթանիայի, Տարտանէլի, Ռոտոսթոյի, Պիլէճիկի, Թէօթահեայի և այլ մօտաւոր] գաւառներու մէջ՝ ամէն կարգի տեղական ու ներածական վաճառքի վրայ չափաւոր գործառնութիւններով,] կենդրոնացած սահմանափակուած յաւէտ իրենց իսկ հրապարակներուն վրայ։ Նիկոմիդացիք և Ռոտոսդացիք՝ միշտ զգոյշ և կարի խնայող ու հաշուեդիտող կը ներկայանան ասոնց մէջ ամէն տուրեւառներու վրայ, և իբր այնպիսիք՝ միշտ ողջ և հաստատուն, թէպէտ և մեծ մասամբ կցիր ու միշտ երկրորդական կացութեանց տէր և հեռի առևտրական մեծ գործերէ, լայն ձեռնարկներէ։ Անատոլուի և Ռումէլիի երկաթուղիները՝ բերած են աւելի շուտիկ գնացքի մը իրենց այս զգոյշ ծանր ու ամփոփ գործունէութիւնները։ Ռոտոսդոյ և Նիկոմիդիա՝ իրենց շուրջի վատուցեալներուն և գիւղերով՝ 'ի վաղուց հրաչակուած են իրենց արմտիքովը, մրգեղէններովը, կաթնեղէններովը, որոց ճաշակն ամէնէն առաջ կառնէ Բիւզանդիա։ Իսկ Պարտիզակ գիւղը՝ պայտի ու կաղինի գործերով զրուցուած է ստէպ. իր կրթական նախանձաւորութեանց հետ։